

կած, Իւր գնալու տեղն, դէպի Գողգոթա, Իւր վերջին խօսքը, որ ասաց Նա ժողովրդին, բարութեան խօսք էր. «Նրուսադէմի աղջիկներ, իմ վերայ մի՛ լաք, այլ ձեր ու ձեր զաւակների վերայ լացէ՛ք»։ Հաւատարիմ մնալով Իւր աստուածային կոչմանն, Նորա վերջին աղօթքն ևս, որ արաւ խաչի վերայ, Իւր սպանողների համար էր։

Մարդկային արժանաւորութեան և Աստուծու հետ մի լ'նելու ինչ վտեմ՝ օրինակ է, որ տուաւ բոլոր մահականացու մարդիկների ազգին, Ամենայն առաքինութիւնները, որ այս այն մարդի մէջ հատ հատ ու ջոկ ջոկ են գտնվում, Քրիստոս մեր Փրկչի՝ մէջ մի կատարեալ ամբողջութեան ու միութեան մէջ էին փայլում. և ինչ առաքինութիւններ որ մինչև անգամ՝ ամենապատուական մարդիկների մէջ, պատահումէ, որ տկարութեամբ, կամ երկիւղով, կամ քաշվելով, պղտորվում են, Նորա մէջը իւր միշտ նուիրական անխառն, անպղտոր, մաքուր ու սուրբ զրութեան մէջ է. ինչ որ մարդիկների մտքով ու զատողութեամբ ճշմարիտ է ճանաչված, և ծուռն ու սխալը, առանց հետն խառնվելու, չէ լինում, Նորա խօսքի ճշմարիտն մեզ այնպէս միշտ հաստատ ու յաւիտեանական Իւր անսխալ նշանակութեան մէջ է մնում, ինչպէս մի միշտ հաստատուն և յուսալի վեմ իւր տեղն հաստատ ու անշարժ է մնում։

Ո՛վ աշխարհիս Փրկչի օրինակ. դու միշտ իմ առաջիս եղի՛ր և իմ առաջիցս գնա՛, մի լուսաւոր աստղի նման, բոլոր իմ կեանքիս ու մահիս մէջ։ Ամենայն օր Քեզ առաջիս ունենալով և Քո վերայ նայելով, նորոգվում, Ես ևս մտնէի՛ այն մեծ ու աստուածային պատերազմը իմ կ'ըրբերիս ու իմ գլխիս գալու բաներին հետ առաքինութեան, արդարութեան ու ճշմարտութեան համար, Ես ևս հոգով ցանկանումեմ Քրիստոս իմ տիրոջս, իմ Աստուծուս ճանաչել ու խոստովանել իմ գործերիս մէջ աշխարհի առաջին և ոչ մի վտանգից չվախենալով, Այն ժամանակ ես ևս կ'աղթեմ իմ կամքիս հաստատութեամբ, և իմ երկրաւոր կեանքիս վերջն բուրդեմ կարող եմ ասել, «Լաւ պատերազմը պատերազմեցի, ընթացքս կատարեցի, հաւատս պահեցի, Այսուհետեւ մնումէ՝ ինձ արդարութեան պսակն, որ ինձ իմ Տէրս, արդար Դատաւորը, այն օրը պէտքէ տայ, և ոչ թէ միայն ինձ, այլ և ամենքին, որոնք սիրումեն Նորա յայտնվիլը»։

(Թարգմ.)։

Գր. Եպ. Աղ.

ԼՕՆԴՕՆ.

Տէմզա։ Լօնդօնի մօտենալ։ Հրավէզէնդ։ Վուլփի։ Գրինվի։ Լօնդօն։ Փողոցի խոնուծիւն և շարժողութիւն։ Յայտարարութիւնների բաղադր. Փողոցի բժիշկներ և ատենախօսանք։ Թուխայեր։ Լօնդօնի մեծութիւն։ Սխալ։ Ստորեկերեայ երկամուկի։

Անհնար է ներկայացնել Տէմզա գետի բերանից աւելի կենդանի պատկեր, Միօրինակ նաւարկութեան ձանձրոյթը յանկարծ փարատվումէ և գետափը

սկսումէ կենդանաւ և կանաչել: Լողացող փարոսները հրեւումեն մին միւսի ետևից: Ծանրաբեռն առևտրական նաւակներ, թեթև շաւաւատիական մակոյկներ, պճնազարդ հիագներ, նաւեր, այս ամենը արագութեամբ աչքի են հրեւում թէ աջ թէ ձախ: Սոքա ամենքը կրումեն այն երկրի դրօշակը որ ըստ ժողովրդական երգին «կառավարումէ ծովերն»: Մենք Անգլիայումն ենք, այն երկրում, որ նշանաւոր է գործարաններով, նաւերով և քարածուխով: Չկայ աշխարհումս Տէմզայի նման գետ, որ նպաստէր առևտրական գործունէութեան այգալիսի ահագին զարգացմանը: Անխոնջ և եռացող կեանքը տիրած է նորա ավերին և պղտորումէ նորա ջրերը: Մշտական խոնութիւնը և բազմաթիւ ժողովուրդը հիացնումեն օտարերկրացուն իւր անդադար սաստիկ շարժողութեամբ: Տէմզա նաւագնաց է 188 անգլիական մղոն տարածութեամբ և 70 մղոն ենթարկւած է ծովի մակընթացութեան և տեղատուութեան ազդեցութեանը: Ահագին առևտրական նաւերն մօտենումեն մինչև նոյն ինքն Լօնդօնի կամուրջը և տեղատուութեան միջոցին նոցանից և ոչ մին առագաստի և շոգու պէտք է ունենում ճանապարհ ընկնելու համար: որովհետև տեղատուութիւնը հանումէ նոցա բացարձակ ծովի մէջ: Որքան առաջ երթանք, այնքան յաճախ պատահումենք մեծ նաւերին և շոգեկառքերին, այնքան աւելի շարժողութեան մէջ են ավերը: Բայց ահա երեւցաւ առաջին անգլիական արուարձանը — Հրավէզէնգ, որ ընկած է զառիվայր ամի վերայ: Հրավէզէնգի միջին տնակները ամփոփւած են նորա կապտագոյն զանգակատան շուրջ. նաւեր, միջնորանոցներ, նաւեր նորոգելու տեղեր պատահումեն առաւել շատ, զգումենս մի ահագին և նշանաւոր քաղաքի մօտաւորութիւնը: Օգը դառնումէ աւելի ծանր և անխառնելի լցւած. մասախուղը իրրև մի քօղ պատումէ բոլոր առարկաները, սեաւ և թանձր ծուխ դուրս է գալիս հազարաւոր ծխնելոյգներեց, խանձահոտութիւնը ամեն բոլորում սաստկացնումէ շնչարգելութիւնը և ծակումէ աչքեր: Ամեն մի քայլափոխում գետը արգելւած է երեւում նաւերի գործիքներով, ահագին նաւերով և կայմներով: Ամեն մի բոլորում աւելի սաստիկ են զգացւում մարդկային կարողութեան նշանները, որը բոլորովին հնազանդեցրած է իւրեան բնութիւնը. աւելի յաճախ են պատահում համարանոցներ, նիւթեղէնների և ապրանքների կոյտեր, հակերի ահագին դէզեր և նաւեր նորոգելու տեղեր: Ահա և նոր արուարձան — Վուլվիչ: Այստեղ արդէն գետը ներկայացնումէ մի ընդարձակ փողոց, որի երկու կողմում գտնւած շինութիւնների մէջից վեր ու վար շարժումեն նաւակներ: Ամեն տեղ դանդաղումեն համարանոցներ պղնձի, քարածուխի, նաւերի գործիքների և ամեն տեսակ նիւթերի համար, ամեն կողմ քաջբշտումեն քուրձեր, զլորումեն տակառների, ձեռնասայլակների, փականքները ճոճումեն և պարանները ճայթում: Սակայն քարածուխի դէզերով բեռնաւորւած նաւերը, նաւորդներով նաւակները, ձկնորսական մակոյկները կինամոնագոյն առագաստներով աշխատումեն մի որ և իցէ հնարով ձեղքել անցնել այս կայմների և նաւերի լախրինտոսի մէջից:

Ածուխի հատը աւելի սաստկանումէ, ծուխի թանձր բարդութիւնները առաջվանից աւելի խաւարեցնումն մօտակայ քաղաքը: Եւ այս խաւարի, ծուխի և կպրի մէջից լսվումն միլիօնաւոր մուրճերի ձայնի, որոնք և ոչ մի բոպէ դադարումէն: Նոցա ծանր և մշտական սալի հարուածները սուր և սաստիկ կերպով լսվումն գետի վերայից հեռաւոր տեղերում: Նոցա հետ խառնվումն և մեքենաների, անիւների խուլ ձայնը և սղոցների շէխնը:

Համարեա ամբողջ մի մղոն տարածութեամբ գետի աջ ափից սկսած, որի վերայ գտնվումէ Վուլփիչը շարունակվումն պատերազմական նաւարանների մօտայլ քիւերը: Նոցա ներքեւից արագութեամբ անցնումն մեծամեծ նաւեր, բայց այն մարդիկներին, որոնք ածուխի ծուխի մէջ կուռնեն Բրիտանիայի ծովային մեծութիւնը, նկատել չափազանց դժուար է: Նոքա իրրեւ սեւ կամ մոխրագոյն խուռն բաղմութիւն են երեւում, որ անդադար չարժումէ այս այն կողմ: Գետափին գտնված բարձր պատի ետեւ շինված է Վուլփիչի նաւարանը, ուր աշխատումէ բաղմութիւ ժողովուրդը, որ տեսնումէ արեգակը միմիայն մշտական խաւարի մէջ և շնչումէ միմիայն խանձահոտութեամբ և ծխով լցված օդը: Նաւարանին կից է ահագին ծովային զինարանը, ուր պահպանվումն մօտ 30,000 թնդանօթներ և մօտ 4 միլիօն թնդանօթի գնտակներ: Վուլփիչը աւերիչ հրազեններ և ամեն տեսակ պատերազմական անօթներ շինելու գլխաւոր և մեծ կեդրոնն է: Ուստի զինարանի բոլոր բաժանմունքը եռումն գերօրինակ գործունէութեամբ: Վուլփիչի զինարանը ամենամեծ պահարան և ամենահագին գործարանն է ոչ միայն Անգլիայի, այլ և ամբողջ աշխարհի մէջ:

Բայց ահա անհետացաւ Վուլփիչը, դադարեց և մուրճերի, անիւների, մեքենաների ձայնը, արդարեւ սակաւ ինչ հանդարտութիւն տիրեց, բայց պոք միմիայն մի բոպէ — և նոյնպիսի խուլ ձայներ և թնդիւններ աւելի սուր և աւելի բարձր ահա սկսեցին տարածվել առաջից: Շողեկառքը մօտենումէ արեւելա — հնդկական ահագին նաւ նորոգելու տեղին: Գետը այստեղ փոխումէ իւր ուղղութիւնը գէպի ձախ և յետոյ կրկին նոյն ուղղութիւնը ստանալով կազմումէ մի մեծ հրուանդան, որը կտրատված է նաւարանների ջրանցներով և ջրամբարներով: Այս հրուանդանը կոչվումէ «Շան կղզի»: Գրինվիչը, որը սորա հանգէպ է գտնվում, երբեմն արքայանիստ քաղաք էր, բայց այժմ այստեղ չեն բնակում թագաւորներ և և Գրինվիչի պալատը, որը կառուցած են շատ Սաիւարաններ, դարձած է հիւանդանոց ծովային խեղանդամ կամ ծեր գինուորների համար, որոնց թիւը հասնումէ մօտ 3/4 հազարի:

Գրինվիչ և Դեպտփորդ գիւղերից յետոյ, ուր ինչպէս յայտնի է աշխատեց նաւարաններում Մեծն Պետրոսը, Տէմզայի ափերը աւելի նեղանումն: Ամեն տեսակ մեծութեամբ և ձևով շինված հազարաւոր նաւեր կանգնումն գետում և գետափինայ տները ծածկվումն աչքից նոցա անհամար կայմների սրածայր գագաթներից:

Ահա վերջապէս և Լօնդօն, Նէպօլիոնը հիացնումէ իւր հրաշալի ծո-

ցով, երկնքով և մշտաբար Վեղուժով, Հոօմը—իւր յիշատակարաններով, Վենետիկը—իւր տարօրինակ ճարտարապետական շինութիւններով, Փարիզը—իւր շքեղութեամբ և հոյակապութեամբ, բայց Լօնդօնը տեսնելով ամեն բանից առաջ և ամենից աւելի ձեզ զարմացնումէ նորա մեծութիւնը, աղաղակը և անհաստալի, ոչ մի բոպէ չդադարող, շարժիւնը փողոցների մէջ, «Ահագին և անսահման» ահա այն բառերը, որոնք առաջին անգամ այստեղ պատահող իւրաքանչիւր ճանապարհորդի բերանից լսվումեն, Ամբողջ Լօնդօնը նկատելու, նորա փառաւոր և քրական աշխարհահանգէսների կոյտը տեսնելու, նորա նեղ, հեռաւոր և մանուածապատ փողոցները նայելու համար 2, 3 տարին բաւական չէ, Պատմումեն որ մի արքայադէմիանգամ Լօնդօն հասնելով երեկոյեան ուշ միջոցում, կարծեց որ քաղաքը յատկապէս իւր համար է լուսաւորված, մինչդեռ մայրաքաղաքը լուսաւորված էր սովորական կերպով, Եթէ նա կարողանար ոտով անցնել Լօնդօնի բոլոր բազմամարդ փողոցներից, տնչուշտ պիտի կարծէր որ նոյն օրում մայրաքաղաքի մէջ պատահած է մի սարսափելի հրդեհ կամ խռովութիւն, Եւ արդարեւ դժուար է ներկայացնել փողոցների մէջ կառքերի շարունակ թրնդիւնը, հազարաւոր այլապէս մարդիկների տարբեր տարբեր հնչիւնները և ձայները ամեն կողմից և սալարկների վերայից հետիոտների արագ շարժողութիւնը, Այսպիսի շարժողութիւն ժողովրդի բացի Լօնդօնից չենք տեսնում ուրիշ որ և իցէ մայրաքաղաքում, թերեւս միայն Փարիզում:

Այստեղ հանդարտ քայլերով դնալ կամ բերանարաց այս այն կողմ նայել անկարելի է, այլ պէտքէ հեռանալ կամ փախչել այս զբաղած և լուսեաց ամբոխից, որ հանդարտ և անկարեկից խոցումէ բոլոր հանդիպողներին հարուածներով կուրծքին, մէջքին և կողքերին, Ամեն կողմերից աղաղակներ են լսվում, տանումեն կողովներ և ամեն տեսակ ծանրութիւններ սարի նման զիզված և չորս կողմից կտրումեն մարդի ճանապարհ, Կանգնել անհնար է, որովհետեւ կարելի է ոտնակոխ լինել առանց ուշադրութիւն անգամ անձիդ դարձնելու, Ահագին տների բազմութիւնը բարձրանումեն մին միւսի ետեից անընդհատ, Աշտարակների, բարձր ծխնիների, նեղ տանիքների բազմութիւնը իրր մի ամբողջ անտառ երևումեն թուխ կապտագոյն մառախուղի մէջ, Հողեսայլերը սուլումեն և ղողանջում ամեն կողմերից, թէ կողքերից, թէ վերեից և թէ ներքեից, Ահա փողոցի մէջից նեղ ճանապարհով, տանիքների հաւասարութեամբ զլորումեն մեքենայ, պատելով և առանց դորա արդէն իսկ մոխրագոյն երկինքը ծուխի բարդութիւններով, իսկ այստեղ ոտի տակից փանդակների մէջով լսվումէ ստորերկրեայ երկաթուղու խուլ ձայնը և սուլումն որ խափանումէ կառքերի թրնդիւնը, Դէպի՞ ամեն կողմ փողոցների մէջով արագ ընթանումեն պնդակառքերը, որոնց վերեւը նստած են անցորդների խմբեր հովանոցներով, իսկ եթէ լաւ եղանակ լինի բարեբիկ հագված տիկիներն անգամ բարձրանումեն վերեւ, Զէ անցնում հինգ բոպէ և ահա քանի մի տասնաւոր

անդակառքեր նորից անցնումեն բոլորովին ծանուցումներով պատած: Ահա սլանումեն արագ մանրակառքեր, առանձնակառքեր, զլորվումեն սայլեր իւրեանց բարձրութեամբ լաշտարակների նման կողովներով:

Այս ընդհանուր խռնութեան և շարժողութեան մէջ իսկոյն կարող էք ճանաչել բուն անգլիացուն: Ոչ մի ձայն կամ աղաղակ նորան խելքից չէ հանում: Նա ոչ մի բոպէ չէ կանգնում: Որտեղ պէտքէ նա անշուշտ տեղ կտայ: Կշեղվի սալարկից, կպտոնայ մի կողմ, ոչ երբէք արտայայտելով իւր ծանր գէմքի վերայ մի փոքր երկիւղ կամ զարմացում: Եւր հասակի վսեմ պարթեութիւնը նա մինչև անգամ չէ փոխում և այն ժամանակ, երբ նորան կմօտենայ մի օտար երկրացի ճանապարհ հարցնելու կամ մի որ և իցէ բացառութեան համար, Հպարտ աղնուականը փոխանակ պատասխան տալու ցոյց է տալիս նորան ռստիկանը կամ մի ուրիշ պաշտօնական անձն: Որին հարկաւոր է և զիմէլ: Բայց այսպէս միայն բարձր գասակարգի անգլիացիներ են, իսկ միջին գասակարգի ժողովուրդը կամ հասարակ գասի մարդիկը չափազանց ընկերասէր և պատրաստական են, թէպէտ և նոցա պատրաստականութիւնը երբեմն խիստ ձանձրացուցիչ է: Մի որ և իցէ հարցմամբ դիմող օտար երկրացուն անգլիացին բռնումէ ուսերից, սկսումէ ցոյց տալ նորան ճանապարհը տեսակ տեսակ պարզ ձևերով ինչպէս անումեն մանուկին ուսումնարանում: Խառն անգամ կրկնումէ մի և նոյն խօսքը և այս միջոցին բռնելով նորա ուսից այս և այն կողմն է զարձնում: Երբոր վերջապէս իւր ձևոց կազաւովիք, նա զիռ ևս երկար ժամանակ կնայէ ձեր ետեից: Հհաւատալով որ կարողացաք այդպէս շուտով հասկանալ իւրեան:

Ամեն ճանապարհների կիցքում, ամեն փողոցների անկիւններում ապշեցնումեն ձեզ շրջող յայտարարութիւնները: Լօնդօնը ամենից առաջ զանազան և բոլորովին օտարօտի յայտարարութիւնների մայրաքաղաք է: Պատահոտուն գլխարկով ծերունու կզակից սկսած մինչև ռաները, առաջ և ետև, կախված են երկու ահագին տախտակներ, որոնց վերայ խոշոր տառերով գրված են յայտարարութիւններ մի որ և իցէ թատրօնի, համերգի, ժողովների, գրքերի վաճառման, նորաձև հանդերձների, գուսանական երգերի մասին: Որոնք պիտի ներկայացվին այսօր այս կամ այն թատրօնում: Իսկ կողքերին վերեւից մինչև վար կախված են նոյնպէս յայտարարութիւնների թերթեր: Այն առաւանակների և թերթերի տակից դուրս հանած ձեռին, որոնցով նա բոլորովին ծածկված է լինում, բռնած է ամենափոքրազիր տետրների կապոց, երբեմն շատ զեղեցիկ տպագրված, որոնց աշխատումէ իւրաքանչիւր անցորդին ձրիարար տալ: Երբ տուն վերադարձած մարդս սկսումէ հանվել մի բոպէում երբեմն գրպաններից, վերարկուի մէջից դուրս են թափվում տասնաւոր այդպիսի գրքոյկներ: Սկսում էք նայել նոցա վերայ և: Ապտուած իմ, ինչպիսի բազմատեսակութիւն էք գտնում նոցա մէջ: Մին բովանդակումէ յայտարարութիւններ, մանրամասնօրէն նշանակված է հասցէն այս կամ այն մագաղինի, ապրանքների

գներ ևն: Միւսը պարունակումէ մի որ և իցէ ազանդի վարդապետութեան գլխաւոր կէտեր: որոնք խիստ շատ են Անդլիայում: Նոցանից ոմանք խորհուրդ են տալիս ձեզ ամենից առաջ հաւատարիմ մնալ ծիսակատարութիւնների կրօնին: միւսները մերժումեն նոցա: սոքա դորսովումեն ամեն մի կրօն: նոքա առաջարկումեն յիշել Ս. Գրքից այս կամ այն խմաստալից խօսքը և ըստ այնմ ուղղել ձեր կեանքը: Բայց ի՞նչ հանդիսագնացք է այս որ հանդիսաւար զիմումէ առաջ փողոցներով: Առաջից գնումէ մի ամենափոքրիկ կառք: շաքարեղէնի պարկի պէս շքեղ: ամբողջապէս զարդարված ծաղիկներով: Այս օտարոտի պարկ — կառքին լծված են մի զոյգ պօնիներ: բայց սոքա այն աստիճան փոքր են: որ համարեա նմանումեն բարձրահասակ շներին: Պառքի մէջ գերօրինակ վայելուչ և գեղեցիկ կերպով դասաւորված են զանազան տեսակ շաքարեղէններ և զամրիւղներ: Այս մանրիկ կառքի ետեւից գնումէ մի բաց կառք: ուր նստած են հարուստ հագված չորս ականիներ և որոնցից իւրաքանչիւրը բռնած է իւր ձեռում ծաղիկներով պատված դրօշակ և որի վերայ կարելի է կարգալ քաղերաւաճառի յայտարարութիւնը և նորա անուշարանի դրուատը: Բաց կառքի ետեւից գնումէ վեցձիանի ոսկեզօծ կառք ձիապանով և համագլխատաւորված կեղածամ սպասաւորներով: Այս կառքի մէջ ոչ ոք չէ երևում: բայց նորա խորամանկօրէն զարդարված պատուանդանի վերայ դրված է հարսանեկան կարկանդակը:

Փողոցի կին վաճառականը շրջումէ ահագին հովանեակով: որը բոլորովին զարդարված է յայտարարութիւններով: Եւ ի՞նչպիսի խորամանկ հնարադիտութիւն են այս շարժուն յայտարարութիւնները: Թէ առաջից եկողը կարդումէ թէ ետեւից հասնողը և թէ արագընթաց գնալիս անգամ կարողէք որոշել բոլորը: որովհետեւ սե տառերը խիստ որոշ գրված են սպիտակ թղթի վերայ: Փոքրիկ խանութների առաջ լինումեն փայտեայ տրձաններ կարճ զգեստով և նոցա չորս կողմից կախված են լինում թերթեր և տոմսակներ այսպիսի վերնագրերով: ուշադրութիւն դարձրէք աղբանքի գնի և յատկութեան վերայ: Եւ կայ արդիօք այստեղ մի տեղ: ուր յայտարարութիւններ չգտնվին: թէ տների: թէ պատերի: թէ նոր շինութիւնների միջնորմների: թէ սայլերի ծածկոցների: հանրակառքերի պատերի և առաստաղների: լուստերների սիւնների և մինչև անգամ կամուրջների կամարների վերայ: Անցնելով նաւակով կամ շոգեկառքով կամուրջի տակից: եթէ վեր նայելու լինիք: կամուրջի մոտյլ կամարների վերայ անգամ կտեսնէք յայտարարութիւններ: Գիշերով ձեզ պատահումեն անդադար մարդիկ: որոնց գլխի վերայ լինումէ լուստեր կամ: առաւել լաւ ասած: չափազանց բարձր գլխարկ գունաւոր թղթերից սոսնձած: որի մէջ մաճուցված է մի կիսայրեաց մեղրամոմ: որ վառվումէ և լուսաւորումէ ներսից յայտարարութիւնը: Գնումեն նորաձե կառքեր: վերան ստուերաթղթից ձևեր բարձրացրած և բոլորովին պատած յայտարարութիւններով: Շատ անգամ ձեր առաջից անցնումէ մի ամբողջ հանդիսագնացք դրօշներով: որոնք զարդարված են

լինում՝ յայտարարութիւններով կամ հասարակ երկայն ձողեր բռնած, որոնց ծայրում ծածանվում են յայտարարութիւնների երփներանգ լերթեր։ Ահա անցնում են 30 մարդիկ զոյգ զոյգ, բոլորը տարօրինակ ձեռով և զանազան գոյնով հագնված, նոցանից փոքրահասակները առաջն են, յետոյ սակաւ ինչ բարձրները և վերջին կարգերում արդէն բարձրահասակները։ Նոքա միաքայլ առաջ են գնում և բռնած են ձեռներին ամենապայծառ դունաւոր զրօշներ, պատած մի յայտնի մագաղինի յայտարարութիւններով։ Ահա և երեւի կանաչ սայլակը, որը համարեա ամեն օր աչքեր է խողեցնում։ Այն յայտարարութիւնները որոնցով նա պատած է սովորաբար ծանուցանում են այս կամ այն խանութպանի կամ վաճառականի տեղափոխութիւնը։ Վառքը քաջօգ ձիու մէջքի վերայ նստած է լինում մի փոքրիկ շուն, հարկաւ սորա համար հմտաբար կրթված, որը դառնում է այս և այն կողմն և կատաղաբար հաջում է ու սորանով դարձնում է անցորդների ուշադրութիւնը իւր վերայ, որոնք և սկսեալ կարդում են այն խոշոր յայտարարութիւնները։ Նրբեմն աղաղակների միջոցով են ցրվում յայտարարութիւններ։ Այսպիսի մի մունետիկ աղաղակում է ուղղակի իւրաքանչիւր անցորդի ականջին կամ հեռուն ևս և նորա աղաղակը լսվում է շատ անգամ նոյն իսկ փողոցի ծայրում։ Այստեղի հասարակ ժողովուրդը ընդհանրապէս յայտնի է իւր հրակայական կուրծքով և առողջ ձայնով։ Անգնելով կառքի հսկում, հանրակառքերի առաջնորդները անդադար դառնում են այս այն կողմն բարձրածայն յայտնելով գլխաւոր կէտը, ուր գնում է հանրակառքը և ճանապարհի վերայի բոլոր փողոցների և տեղերի անունները։ Արովհետեւ այստեղ իւրաքանչիւր նշանակված ժողովատեղում գտնվում են չափազանց շատ հանրակառքեր, այս պատճառով առաջնորդներից իւրաքանչիւրը աշխատում է, որ եթէ միմեանցից աւելի բարձր չգոչէ, դոնէ այնպիսի որոշ ձայն արձակէ, որով կարողանայ զանազանվել մնացեալներից։ Սակայն մի քանի փողոցներ մինչև այն աստիճան բազմամարդ են, որ նոքա գոչել ամենեւին չեն կարողանում և բաւականում են միմիայն ձեռք վեր բարձրացնելով, հանրակառքերի և սայլերի մէջ սեղմվում են հացեփների, մսավաճառների, ձուկ, կանաչի, «չների և կատունների համար փշրանքներ» վաճառողների սայլակներ։ Այս բոլոր շարժական խանութները նոյնպէս զարդարված են ամենահնարագետ փերնագրերով։ Այս տարօրինակ կառքերի մէջից երբեմն արագ սլանում են փրնագնացի նման կառք, որ կառավարում է մի մարդ իւր ոտներով, իսկ մի և նոյն ժամանակ ձեռներով գործում է զուլպայ կամ մի որևիցէ կոշտ անկուած, նորա մէջքին ամրացած են յայտարարութիւններ և զանազան զեկուցմունք, իսկ ինքը միազանակ և միաձև, շատ անգամ ոտանաւորով, զրուատում է այս կամ այն մագաղինը, այս կամ այն մթերանոցը։ Այս բոլոր բազմազանութիւնը փողոցի մէջ նսեմացնում են սև մանրակառքերը, քառանիւկայ կառքերը, երկանիւկայ լեթեւեղ կառքերը, անցնելով մեծ յաջողակութեամբ ահագին հանրակառքերի և սայլերի մէջտեղերից։

Երկրորդ կարգի փողոցներում ամեն տեղ կանգնած են փողոցի շոգեշարժ

մեքենաները՝ որոնց վերայ խորովում են շագանակներ, երչիկներ, դետնախըն-
 ձորներ և հազարաւոր վաճառականներ աղաղակում են իւրեանց վաճառի
 համար։ Ձանաղան նուազարանների ձայները լսվում են ամեն կողմերից։
 Մի անկիւնում ցոյց են տալիս չինական ուրուական, մի տեղ հրդեհոնք
 երգում և մարտկիւնք, միւս տեղը լսվում է շատլանդական դարաիկի ձայնը։
 սակաւ ինչ հեռու նուազածու նեղրների պար թմբուկներով, ջութակներով
 և կլարնետով։ Այստեղ Պօնչը սուր սուլում է, ածում է թմբուկ և կանգ-
 նեցնում է իւր փողոցային թատրօնը։ Ժողովուրդը ահագին բազմութեամբ
 շրջապատում է նորան։ Նորանից քիչ հեռու մի մարդ սե բաժկոնակով
 բարձրանում է մի բաւական բարձր պատուանդանի վերայ, սա բժշկական նիւ-
 թերի վաճառօղ է։ Մի կողմից նորա մօտ կայ մի բարձր սեղան, որի վերայ
 դասաւորված են զանազան պատրաստութիւնների, միւս կողմը իւր ծառան,
 կարմիր բաժկոն հագած, որը թմբուկ է ածում իւր բոլոր դժով և ամ-
 բոխը իսկոյն շրջապատում է նորան։ Այն ժամանակ փողոցային բժիշկը
 վերցնում է սեղանից պայծառ ներկված անդամազնական նկարները և ամ-
 բոխին ցոյց է տալիս. «Տիկիններ և ազնուականներ»։ ատենախօսում է նա, ե-
 թէ ձեր փորն է ցաւում, այդ յառաջանում է աղիքների խանգարվելուց։
 Այս հիւանդութիւնը թէպէտ և թեթեամիտ մարդիկներին մի շնչին բան
 է թւում, բայց կարող է մահ յառաջացնել։ Եթէ հիւանդ բժշկի չզիմէք,
 Բայց ի՞նչ են մեր բժիշկները։ Գոքա ձեր աշխատանքներից օգուտ քաղօղ-
 ներ են։ Ակայազիր ստանալով իւրեանց պաշտօնին համեմատ, ապրում են
 շտալութեամբ, կամենալով հաւատացնել ձեզ այդպիսի կենցաղավարու-
 թեամբ, որ իւրեանք շատ հրաւերներ են ստանում։ Տիկիններ և ազնուա-
 կաններ, դուք շափաղանց թեթեամիտ էք։ Ձեզ լաւ որսում են այդ կերպով։
 Դուք ինչպէս գիշերային թիթեռնիկներ ընկնում էք կրակի վերայ և հատու-
 ցանում էք բժիշկներին ահագին գումարներ նորա լաւ կենցաղավարութեան
 համար։ Նպաստում էք նոցա ձեր աշխատանքներից օգուտ քաղելուն, որովհե-
 տե նորա խօսք են կապած դեղարանի հետ և նշանակում են ձեզ թանկագին
 դեղեր։ Եւ նոյնպէս բժիշկ եմ, եւ նոյնպէս կարող եմ ձեզ երեւել շտալ-
 ութեամբ և փայլով, բայց եւ ատում եմ սնտի փայլը, ատում եմ արդէն
 վաղուց մաշված և համը ու հոտը կորցրած քաղաքակրթութեան հին
 ցնցոտիները։ Եւ ժողովրդի բարեկամ եմ, եւ ժողովրդական բժիշկ եմ, ուստի
 և պարտական եմ երեւել ձեզ այնպիսի ձեռով, որի հետ դուք սնվել էք,
 եւ խօսում եմ բաց երկնքի կամարի տակ այն պատճառով, որ առանց
 որեիցէ արհեստական ծածկոցների ապրում է նորա տակ հասարակ ժո-
 ղովուրդը, որին և եթ կամենում եմ ծառայել, (Ժողովրդի մէջից լսվու-
 մեն ծափահարութիւններ և հաւանութիւն և ամեն կողմերից աղաղա-
 կում են «լսեցէք, լսեցէք ինչպէս խելացի է խօսում»)։ Եւ նորհակալ եմ
 ձեզանից, տիկիններ և ազնուականներ, ձեր հաւանութեան համար, հաւա-
 տացէք, պատրաստ եմ ծառայել ձեզ մինչև արիւնիս վերջին կաթիլը։
 Սա մի լուկ խօսք է, գործով կապացուցանեմ ձեզ . . . Ահա նայեցէք,

Հազի դէմ պատրաստված այս փոշու արկղիկին, Այս միջոցը վաղուց գործածվումէ լուսաւորու ընտանիքի մէջ . . . Իրաւ է իւրաքանչիւր արկղիկի համար նորանից մի գինէ են առնում, ինձ նստել է Յ պէնս, իսկ ձեզ ծախումեմ չորս պէնսով, Դուք գիտէք որ սա հարիւր տոկոս գույքէ և աւելի արժանագին է քան թէ ղեղարանները կառնեն ձեզանից, Բայց ես ժողովրդի բարեկամ եմ և յիշումեմ թէ ինչպիսի քրտինքով վաստակումէք դուք ձեր փողերը և չեմ կամենում լինել այն մարդիկներից, որոնք ժողովրդի արիւն են ծծում . . . (կեցցէ, կեցցէ, շատ լաւ, աղաղակումեն ժողովրդի մէջից), Արդէս զի կարողանաք համոզվել, թէ ինչպէս անհրաժեշտ է այս միջոցը, թէ ինչպէս անհրաժեշտ է խափանել հազը նոյն իսկ սկզբում, նայեցէք այս նկարի վերայ . . . և այլն և այսպէս ատենախօսումէ նա անխեղ, Արքան այսպիսի մի ատենախօս ճարտարաբան լինի, որքան որ իւր սէրի խօսքեր առ ժողովուրդը յայտնէ, այնքան աւելի կգնեն նորա նիւթերը:

Ահա և մի ուրիշ ամբոխ, ժողովրդի մէջ կանգնած է բարձրութեան վերայ մի մարդ և կարգումէ տնային տնտեսութեան վերայ մի գրուած, Իրեւ խնայողութեան առաջին միջոց, նա ցոյց է տալիս աշտանակները, որոնց վերայ վառվումեն ծրագները մինչև պատրոյկի վերջին կտորը, «Դուք տեսնումէք, որ միայն ես եմ երկաթի իրերով վաճառականութիւն անող Շէֆէլդից . . . Ձեկայ այստեղ որ փող շահեմ, այլ միայն ժողովրդի օգտի համար, Ահա նամակ, որը ղժբաղղաբար ժամանակ չունիմ ձեզ կարդալու, ուր ինձ առաջարկումեն մեծամեծ գումարներ, եթէ համաձայնեմ միայն գնալ այստեղից, Բայց ես ոչ մի կերպով այդ չեմ անի, կարող եմ արդեօք թողնել ձեզ զոհ այն մեծ խանութպաններին, որոնք իւրեանց վաճառականութեամբ շահվումեն աւելի քան թէ հարիւրին հարիւր, Ես պարտական եմ սովորեցնել ձեզ հասկանալու այդ պարոնների գայթակղական խորամանկութիւնները . . . Իմ պարտքս է ձեր աչքերը բանալ» «Մի հաւատաք» ասումէ միւսը, «Իմ խօսքերին, պատճառ որ ինձանից մեծ ստախօս չկայ աշխարհիս մէջ, Այս արհեստը ես ստացայ նոյն իսկ օրօրոցից, Ամեն անգամ երբ մոռանումէի ստել, մայրս ինձ ապտակումէր, իսկ հայրս մեծարումէր բռնցով, Եւ մեզանից արդեօք ով ստացաւ մի ուրիշ կրթութիւն, Ինչի՞ համար ուրեմն լսումէք այդ ճոռոմբաններին, (Նա ցոյց է տալիս իւրանից սակաւ ինչ հեռու գտնված փողոցի ատենախօսը), Դուք ինձ մի՛ լսէք, բայց նայեցէք վաճառին և գնեցէք, Կարող եմ վստահացնել ձեզ որ իմ վաճառը աժան է քան թէ մի որ և իցէ ուրիշ տեղում, Ես առնումեմ նորան առանց փող տալու և երբէք պարտքերս չեմ հատուցանում . . . »:

Նկատողութեան արժանի է որ փողոցային ատենախօսների մեծամասնութիւնը սկզբում ստանումէր մի կերպ կրթութիւն, բայց նոքա իւրեանց դէպի ջինը (բմպիլիք) ունեցած սաստիկ սէրի և հաստատուն աշխատանքի անընդունակութեան պատճառով, սկսեցին հետզհետէ ընկնել, Ստանալով

Հաւանութիւն փողոցի արուեստաւորներից մի պանդոկում նորա համարձակ առնումն իւրեանց վերայ փողոցի առնախօսի դիրը և արդէն ոչինչ բանի հետ չեն փոխում իւրեանց արուեստը և այդ օրից զօրանումէ նոցա մէջ սաստիկ ինքնասիրութիւն և առաջին լինելու ու ծալահարութիւն ստանալու ձգտումն փողոցային ամբոխներից, որոնց նոքա հոգով անարգումեն, որովհետեւ իւրեանց բարձր են համարում նոցանից, Այդպիսի անձն երբէք չէ նստում և վերկենում փողոցային վաճառականների հետ, չեն վարվում տաներար արուեստաւորների և գործաւորների հետ, պատճառ որ նոքա իւրեանց նկատմամբ չափազանց անկիրթ են և նա բարեկամութիւն է կապում նման փողոցային առնախօսների հետ:

Պակաս չէ խոնվում ժողովուրդ այն մեքենայի մօտ, որի վերայ դրված է մեծ կաթնայի նման մի անօթ, ուր երկումէ օձաձուկով ապուր, Աւաճառողը լցնումէ ամանը և տալիս է այս և այն ցանկացողին, բայց ահա մին, վերջացնելով իւր բաժինը օգուտ է քաղում նոր ամբոխների խոնվելուց և առանց հատուցանելու փողը հեռանումէ աննկատելի կերպով, Աւաճառողը ձգումէ ամեն բան, ընկնումէ գողի ետեից, որին իսկոյն ճանաչումէ աչքերի վերայ գլխարկը քաշած լինելով, և ինչքան որ դժը հասնումէ հասցընումէ մի քանի հատ նորա կոնակին և վերադառնումէ իւր տեղը հանդարտած:

Փողոցների շարժւումները աւելի սաստիկ է թւում միշտ մոխրագոյն մէգի, նուրբ գոլորշու և սև ծխի պատճառով, որոնք իրրեւ մի քօղ պատումն բոլոր առարկաները, Այստեղ պայծառ արեգակը երբէք չէ խրտղեցնում ձեր աչքերը, դուցէ միայն ամառը նորա ճառագայթները ընկնումն ս. Պօղոսի եկեղեցու գմբեթի վերայ, բայց այդ ևս միայն մի բոլակ, Բայց լինումեն օրեր, երբ մէզը բոլորովին պատումէ մայրաքաղաքը և այն ժամանակ մի խօսքով հասնումէ եգիպտական խաւարը, Ճշմարիտ է թէպէտ և այդպիսի օրեր տարուան մէջ միայն երկու, երեք անգամ են պատահում, բայց և այնպէս ինչպիսի օրեր են դոքա, «Ամբողջ քաղաքը և բոլոր նորա շրջականները գերեզման են դառնում, Տօն օրերը լինումէ սպիտակ մէգ, իսկ լուր օրերը, երբ գործարաններում աշխատումեն, լինումէ գեղնագոյն, ծուխի խառնվելուց, նորա հագիւ թէ չչօշալիւօղ խանձարուրը պատումէ մարդին ամբողջապէս այնպէս պինդ, որ նա իւր քթից ոչ միայն երկու քայլ, այլ և երկու մասնաշափ հեռաւորութեամբ համարեա ոչինչ չէ տեսնում, Սորան փարատելու համար սովորական գազային լապտերների լոյսն անգամ չէ օգնում և մինչև անգամ աննշմարելի է, դուցէ լապտերների սիւնին խփելով միայն կարողանաք նշմարել լոյս, բայց այն ևս սիգարի առկայծեալ կրակին պէս, Հարկաւ փողոցների շարժիւնը այդ միջոցում բոլորովին դադարումէ, աշխատանքները խափանվումեն, Եթէ այդպիսի ժամանակում պատուհանից նայէք փողոցի վերայ, միայն կնշմարէք թանձր, կաթնաման մէգ և ուրիշ բոլորովին ոչինչ, Աչ միայն չեն նկատվում փողոցի միւս կարգում գտնված աները, ոչ միայն լապտերները, ոչ

րոնք վառվում են դրան առաջ սանդուխի մօտ, այլ մինչև անգամ պատ-
շգամքի երկաթեայ վանդակները: Ապա փորձեցէք բանալու դէպի փողոցի
դուռը այդ միջոցում, իսկոյն սպիտակ, անշօշափելի, անձև հրէշներ լըց-
վում են սենեակը և առանց նաղ անելու տարածվում են նորա մէջ ամեն տեղ:
Ճրագների, լապտերների լոյսը, հազիւ նկատելի կէտեր են դառնում: Մար-
դիկները, որոնք քանի մի քայլ հեռու նստած են, երևում են այժմ մի-
մեանց իրրեւ ստուերների: Այսպիսի միջոցում վայնորան, որին հարկն ստի-
պումէ գնալ մի որ և իցէ տեղ» . . . «Մի այդպիսի օր, ես գնացի կառք
վարձելու, մտայ կառք և քաջութեամբ, թէպէտ շատ հանդարտ, գնումէինք
առաջ, հետզհետէ ընկղմելով մի տաժանելի խաւարի մէջ: Ուր ենք գնում
արդեօք, ի՞նչ է կատարվում մեր շուրջը, անկարելի էր ոչինչ որոշել:
Նոյն ինքն մեր կառքի անիւի մօտից լսվումէր երբեմն մի ուրիշ անցնող
կառքի անիւի բախիւը, երբեմն բռնաւորված պինդ հանրակառքերի զը-
րճնդիւնը, որոնք համարեա ընդհարվումէին մեր մանրակառքին: Բայց ոչ
միայն պատահօղ կառքը, հապա նաև պինդ հանրակառքը անգամ չէր նըշ-
մարվում: Գոնեա մի գծագրութիւն երևէ, — ամենեւին ոչինչ: Նոյն ինքն իմ
կառապանը անհաւաստի մտքով քաշեց ձիուն, որին ես չէի տեսնում
և կանգնեցրեց: Ի՞նչ կայ, հարցրի: Չգիտեմ թէ ո՞ւր երթամ: Սակայն սա-
կաւ մի խորհելուց յետոյ, մենք կրկին շարունակեցինք առաջ գնալ:

Յանկարծ առաջուց լսվեցաւ մի ձայն և հարուած, որ համարեա նստած
տեղիցս վեր թոցրեց: Ամբողջ մանրակառքը թնդաց: Ձիու գլխի մօտ
բացվեցաւ քառանկիւնի լուսաւոր ծակ դրան նման, որի ետեւը գաղով
լուսաւորված նախասենեակի պէս մի բան երևեցաւ և շփոթված աղա-
ղակներ արձակօղ երկու կանանց երեսներ: Խնդիրն այն էր, որ մեր ձիու
գլուխը խփվել էր և դէմ էր ընկել մի տան դրանը, որի բնակիչները վա-
խեցած անսովոր ձայնով շտապեցին բանալ դուռը և հանդիպեցան դէմ
առ դէմ կենդանուն: Եղբուրթիւնն իմանալով նոքա ամուր կերպով փա-
կեցին դուռը և կտրեցին գաղային լոյսի միաշաւիղ ցոլացումը, որի վերայ
նկարված էր մեր ձիու ստուերի նկարը: Արկին գերեզմանական լուծիւն,
կրկին անօդնականութեան զգացմունք, ի լրումն իմ անբաղդութիւններիս
կառապանս բոլորովին հրաժարվեցաւ ինձ առաջ տանելուց: Առաքից դուրս
եկայ: Մի անբնակ կղզու մէջ եղածի պէս զգացումն զգացի, մինչդեռ մօտ
չորս միլիոն ժողովուրդ եռումէր շուրջս, բայց նոքա չէին տեսնվում:
Սալայատակի վերայ ես ընկայ մի կակուղ, մարդի նման առարկայի վերայ:
Եւ երբ ես նորան անքաղաքավարութեամբ շօշափեցի, առարկան անբա-
ւականութիւն ցոյց տուաւ: Ներդուրթիւն խնդրեցի և հարցրի թէ ար-
դեօք ո՞ւր եմ գտնվում: «Փորձ կ'իտրձեմ համոզվելու» պատասխանեց նա:
չորս ոտի վերայ եկաւ և սողաց սալայատակի վերայով:

Մեր շուրջ իսկոյն լսվեցան աղաղակներ «հէյ, վա՛յ, վա՛յ» և ուայժառ
բայց ոչ թափանցիկ լոյսեր սկսեցին շարժել մեր մօտ: Փողոցի մանուկ-
ների խմբերը աղաղակներով վազումէին մեր հանդէպ, նոցանից իւրաքան-

չիւրը իւր ձեռին ունէր մի մի ջահ, Թիւրի ծայրում վառվումէին պետ-
 րօլեան լապտերներ։ Մանուկներն առաջարկումէին իւրեանց ծառայութիւնը,
 այն է ուղեկից լինել։ Թանձր մառախլապատ օրերում նորա այս արհես-
 տով շահվումէն։ Ես բռնելով այս պոռօտախօսների մէկի կեղտոտ ուսից,
 խնդրեցի տանել ինձ մի որոշ ուղղութեամբ։ Պայծառ բոցի շերտը, որով
 մանուկն աշխատումէր լուսաւորել առաջի ճանապարհը, իսկապէս չէր
 լուսաւորում ոչ ճանապարհը և ոչ շուրջ գտնված առարկաները և ես
 բացի իմ առաջնորդի ստուերի նկարից ոչինչ չէի տեսնում։ Ցուրտ խո-
 նաւութիւնը, իբրեւ մի սպուճգ սառչոցի ջրով լծրած, ողողումէր զգեստս
 և թափանցեց մարմնումս և ոսկրներս սկսեցին մարմաջել։ Մանուկը և
 լապտերը ոչինչ չօգնեցին։ Ես նորա հետ նոյնպէս մոլորվեցայ ինչպէս կա-
 ռապանիս հետ։ «Մոլորվեցա՞նք» հարցրի։ «Մոլորվեցանք», պատասխանեց
 անկեղծօրէն ուղեկիցս և մինչև անգամ իւր խնայողութենից հանգցրեց
 լապտերը։ «Ո՞ւր է ոստիկանարանը, ո՞ւր են պօլիսիականները» յուսահա-
 տութեամբ հարցրի։ «Իւրեանց տեղերումն են» պատասխանեց անտարբե-
 րութեամբ ինձ տանջողը, ձեռը պարզելով վարձ ստանալու համար։ Գե-
 րեզմանական լուծիւն տիրեց, որովհետև փողոցի շարժիւնը գրեթէ դա-
 դարեց, երբ մառախուղը իջաւ։ Լսվումէր միայն թրրեզ, թրրեզ, թրրեզ
 չոր ձայն և կարծես թէ մէկը փայտեայ գաւազանով խփումէր սալայատա-
 կի սալին։ Թրրեզ, թրրեզ, թրրեզ ձայնը արագ կրկնվումէր մին միւսի
 ետեից և մօտենումէր ինձ։ «Որի՞նչ հարկաւոր է առաջնորդ» մէկն միա-
 դաշնակ երգումէր համաձայնեցնելով տխուր երգը իւր գաւազանի սալա-
 յատակի հարուածներին։ Իւրեան առաջնորդ լինելու առաջարկողի առաջ-
 նորդը իւր գաւազանն էր։ «Ինձ պէտքէ առաջնորդ» պատասխանեցի ես
 և իմ ձեռներս դիպան փրկողիս կուրծքին և շօշափեցի պարանոյվ կախ-
 ված այն տախտակը, որի վերայ սովորաբար գրված է լինում «կոյր»։
 Այսպիսի եղիպտական խաւարի օրերում բոլոր աղքատ կոյրերը, եթէ իւ-
 րեանց առողջութիւնը ներումէ, դուրս են գալիս իւրեանց բնակարաններից
 փողոց ու շահվումէն։ Այդրերը առաջնորդումէն տեսողութիւն ունեցողնե-
 րին։ Աչք ունեցողները կորչումէն, երբ խաւարի մէջ են ընկղմում, կոյրի
 համար չկայ խաւար, որովհետև նորա համար չկայ լոյս և նա աչք չզօրօղ
 խաւարի մէջ անգամ զբօսնումէ իւր հայրենի քաղաքում այնպէս հան-
 դարտ, այնպէս զգոյշ, այնպէս ապահով ինչպէս մի արեգակնային ամենա-
 պայծառ օրը։ Աշխատութիւնների, առուտուր, փողոցի շարժիւն, ամեն ինչ
 դադարումէ այսպիսի օրերում։ Հարիւր հազար մարդիկ զրկվումէն աշխա-
 տանքից և բազմաթիւ անբաղդութիւններ են պատահում փողոցների և
 երկաթուղիների մէջ . . .

Այս մի ուրիշ տեսակ թուխպ ևս, որ միայն երկինքն է խաւարեցնում,
 բայց մարդիկներին ոչ պատումէ և ոչ կուրացնում, ինչպէս եղիպտակա-
 նը, մի խօսքով թանձրութեամբ չէ նստում երկրի վերայ։ Արեւի է ճը-
 րագ վառել և գործ կատարել, տանը թէ փողոցում միւսնոյն է։ Եթէ այդ-

պիսի մի միջոցում նստէք հանրակառք, կարող էք տեսնել որ անցորդները քաղցր նիրհումեն, կարծես զիշերով են ճանապարհորդում եւ յանկարծ թուխպը սկսումէ անօտանալ, սալայատակների, տների, ձիերի և կառքերի վերայ երկինքը սկսումէ զեղնագոյն լոյս ձգել բոլորովին ինչպէս արշալոյսից առաջ:

« Բայց կայ զեռ ևս մի ուրիշ թուխպ . . . Այս ևս կարելի է հաշուել եգիպտական հնութիւնների կարգից, որովհետեւ յիշեցնումէ նա յաճախ այն սիւնը, որը հանեց Իսրայէլացիներին Եգիպտոսից, Ներկայացրէք արեգակնային օր, պայծառ երկինք, Գնումէք փողոցով, պայծառ լուսաւորված արեւով, կղառնաք անկիւնից մի որ և իցէ լայն, ընդարձակ փողոց և ահա յանկարծ կտեսնէք որ նորան կտրած է ձեզանից քանի մի սաժէն հեռաւորութեամբ թուխպի թանձր, աղտոտ պարիսպ, որով ծածկված են ձեր առաջը գտնված բոլոր առարկաները: Սկզբում կարելի է կարծել թէ դա հրդեհ է, բայց երբ աւելի մօտենաք, կհամոզվիք որ դա թուխպ է, ճիշդ սաժ, մի թանձր ամպ, որ իջել է հանգստանալու Լօնդօնի փողոցների մէջ այնպէս, ինչպէս անապատում հանգչումէր ամպեղէն սիւնը, երբ դադարումէին Իսրայէլացիները: Ամենից աւելի այդպիսի ամպը կամ սիւնը հանգչումէ Պիկադիլլի ստորին մասերում, Հայդ—Պարկի անկիւնի մօտ: Ասումեն որ դորա պատճառը Սէրպէնտինա գետի մերձաւորութիւնն է: Բայց այս մասին ոչ ոք հաւաստի չէ, որովհետեւ Լօնդօնի թուխպի տեսութիւնն այնքան սակաւ է հետազօտված, որքան և եգիպտական խաւարինը: Այդ ամպն ունենումէ այնպիսի թանձր տեսք, որ բոլորովին մօտենալով երկիւղալի է մօտնել մէջը, որովհետեւ կարծես թէ խեղդումէ: Բայց վախենալու բան չկայ: Համարձակ կարելի է մօտնել մէջը, շնչել երեք բոպէ ածխածին և յետոյ դուրս գալ կրկին աշխարհ, պայծառ արեւ, մաքուր օդ, զուարթ երկինք:

Իզուր չէ որ Լօնդօնը թխպոտ քաղաքի համարումն է վայելում: Մինչև անգամ ամբողջ կղզին անուանված է « ամպոտ Ալբիօն »: Յիրաւի նոյն իսկ ամենապայծառ օրերն օդը անթափանցիկ է, գծադրութիւնները պարզ չեն, գոյները պայծառ չեն: Վերցրէք օրինակ մի բաժակ մաքուր գետի վճիտ ջուր և աժէք նորա մէջ մի երկու կաթիլ կաթ, բաժակի խառնուրդի գոյնը ձեզ Լօնդօնի մթնոլորդի մշտական դրութեան գաղափար կտայ:

Սակայն շնայելով այս մշտական ամպին, Լօնդօնում մեռածների վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ այս քաղաքը առողջապահութեան նկատմամբ Եւրոպայի միւս մայրաքաղաքներից աւելի առողջ է և մեռածների թիւն այստեղ անհամեմատ աւելի սակաւ է քան թէ Վէնայում, Պէտերբուրգում, Մադրիդում, Բեռլինում և մինչև անգամ Փարիզում: